

ՄԱՍ 7. ՏԵՂԵԿԱՏՎԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2010-2012 թվականներին Ծառայության կողմից, ըստ առանձին տարիների, հրապարակվել և վիճակագրական տեղեկատվության սպառողներին են տրամադրվել հետևյալ քանակի վիճակագրական հրապարակումներ (ներառյալ՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը (հայերեն և ռուսերեն))՝ 2010 թվականին՝ 57 անուն, 2011 թվականին՝ 59 և 2012 թվականին՝ 56 անուն:

Հաշվետու ժամանակահատվածում Ծառայության վիճակագրական հրապարակումներն իրականացվել են ինչպես Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, այնպես էլ արտաքին ֆինանսական աջակցությամբ և ըստ տպաքանակների կազմել, համապատասխանաբար՝ 2010 թվականին՝ 10 576 միավոր, 2011 թվականին՝ 11 216 և 2012 թվականին՝ 13 216 միավոր:

Ծառայության հիմնական օպերատիվ վիճակագրական հրապարակման՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցներն ամսական պարբերականությամբ ներկայացվել են հակիրճ, եռամսյակային պարբերականությամբ՝ առավել մանրամասն, ընդլայնված ու ընդհանրական: Եռամսյակային պարբերականությամբ զեկույցներում ընդգրկվել են «Անկախ պետությունների համագործակցության երկրների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների միջազգային համադրումներ» (ըստ ԱՊՀ Միջպետական վիճակագրության կոմիտեի տվյալների), «Հետաքրքրաշարժ վիճակագրություն», «Մեթոդաբանական պարզաբանումներ» և «ՀՀ ազգային վիճակագրական ծառայության փաստացի հրապարակումների ցանկը» հավելվածները:

Զեկույցներում արտացոլված, ինչպես նաև վիճակագրական այլ տեղեկություններ զետեղվել են Ծառայության <http://www.armstat.am> (հայերալային կայքէջ՝ <http://www.armstat.info>), <http://www.armstatbank.am> և <http://www.armdevinfo.am>, ինչպես նաև ԱՄՀ <http://dsbb.imf.org> կայքէջերում:

Արժույթի միջազգային հիմնադրամի ՏՏՀՍ տեղեկագրում առկա է Հայաստանի վիճակագրության համապարփակ մեթոդաբանությունն անգլերենով, իսկ նույն ստանդարտի՝ Ծառայության կողմից վարվող Ազգային ամփոփ տվյալների էջում <http://docs.armstat.am/nsdp/> երկրի համապատասխան տվյալները:

Զանգվածային լրատվամիջոցներով տարածման համար, ամսական պարբերականությամբ պատրաստվել և տրամադրվել է «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները», «Հայաստանի Հանրապետության սպառողական գների ինդեքսը», եռամսյակային պարբերականությամբ՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող մակրոտնտեսական

ցուցանիշների համառոտագիր» մամուլի հաղորդագրությունները, ինչպես նաև առանձին թեմատիկ հաղորդագրություններ:

Միաժամանակ, 2010 թվականին Ծառայությունը ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հետ համատեղ հրապարակել է «Ամփոփագիր. Համապետական հարցում Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ 2008-2009 արդյունքներով» (հայերեն և անգլերեն) վիճակագրական զեկույցը: 2011 թվականին Ծառայությունը ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հետ համատեղ հրապարակել է «Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, 2010» (հայերեն և անգլերեն) նախնական վիճակագրական զեկույցը, իսկ Ասիական զարգացման բանկի հետ համատեղ հրապարակել է «Ոչ ֆորմալ հատվածը և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում» (հայերեն և անգլերեն) վիճակագրական ազգային զեկույցը: 2012 թվականին Ծառայությունը ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի և ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ՄԱԿ-ի միացյալ ծրագրի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ հրապարակել է «Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, 2010» (հայերեն և անգլերեն) վիճակագրական զեկույցը:

Վիճակագրական տեղեկատվության մատչելիության և միաժամանակյա հասանելիության ապահովման նկատառումներով, բոլոր հրապարակումները զետեղվել են պաշտոնական կայքէջում:

Այդ համատեքստում պարբերաբար համալրվել է նաև Ծառայության բաց գրադարանի գրադարանային ֆոնդը, որի արդյունքում 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա 10 260 միավորի դիմաց 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա գրադարանային ֆոնդը կազմել է 11 300 միավոր (համապատասխանաբար՝ 2011 թվականին՝ 10 474, 2012 թվականին՝ 10 924): Վիճակագրական գրականության ֆոնդը համալրվել է ինչպես Ծառայության վիճակագրական հրապարակումների, այնպես էլ աշխարհի տարբեր երկրների վիճակագրական ծառայություններից և միջազգային կազմակերպություններից (մասնավորապես՝ Միավորված ազգերի կազմակերպության, Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային Բանկի, Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ), Անկախ պետությունների համագործակցության Միջպետական վիճակագրական կոմիտեի և այլն) ստացված գրականության հաշվին:

Ծառայության գրադարանում զետեղվել են նաև Ծառայության վիճակագրական հրապարակումների (ժողովածուներ, տարեգրքեր, տեղեկագրեր և զեկույցներ) 2-ական օրինակներ:

Հաշվետու ժամանակահատվածում Ծառայության բաց գրադարանից օգտվել է 587 այցելու (այդ թվում՝ 2010 թվականին՝ 204, 2011 թվականին՝ 200 և 2012 թվականին՝ 183), այդ թվում՝ գիտական հաստատություններից՝ 10.0%, կրթական ոլորտից (դասախոսական

անձնակազմ, ուսանողներ, ասպիրանտներ)՝ 60.0%, պետական մարմիններից՝ 20.0% և այլ (միջազգային կազմակերպություններից, լրագրողներ, քաղաքացիներ)՝ 10.0%: